ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

21.04.2017 19:07

Ապրիլի 21-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել «Միջազգային գործերի իրավական պաշտպանությունը. Օտարերկրյա գործարարները Հայաստանի Հանրապետությունում և հայ գործարարները արտերկրում» թեմայով միջազգային սեմինար-քննարկում:

Ողջունելով ներկաներին՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանն արձանագրել է, որ 2015թ. մայիս ամսին Փարիզի փաստաբանների միության նախագահի նախաձեռնությամբ ստեղծված Փարիզ-Հայաստան կոմիտեն այս կարճ ժամանակահատվածում արդեն թվով երրորդ միջազգային քննարկում-սեմինարն է նախաձեռնում: Նա ընդգծել է գործարար միջավայրում փաստաբանության նկատմամբ բարձր վստահության կարևորությունը: Նրա խոսքով՝ ինչպես յուրաքանչյուր զարգացող կամ զարգացած պետության, այդ թվում Հայաստանի Հանրապետության համար տնտեսության շարունակական զարգացում ապահովելու գլխավոր նախապայմաններից մեկը գործարարության իրավական պաշտպանությանն անհրաժեշտ մեխանիզմների ներդրումն ու կիրառումն է: Այս համատեքստում զարգացած փաստաբանական ինստիտուտ և առողջ փաստաբանական համայնք ունենալն անհրաժեշտություն է: Նա անդրադարձել է Համաշխարհային բանկի կողմից հրապարակած գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը գնահատող Doing գործարարության 2016 թվականի զեկույցի շրջանակներում՝ 189 երկրների շարքում Հայաստանի զբաղեցրած 35-րդ հորիզոնականին, նշելով, որ այս ցուցիչը ևս գրավիչ մթնոլորտ է Հայաստանի Հանրապետությունում գործարարությամբ զբաղվելու համար: «Կարևոր է, որ փաստաբանը կարողանա նախականխիչ պայման ստեղծել ներդրողի համար: Հարկային մարմինների հետ առնչության ժամանակ ևս փաստաբանը կարևոր նշանակություն ունի»,-հավելել է Պալատի նախագահը: Արա Զոհրաբյանն անդրադարձել է նաև ներդրողների համար կարևոր հարկային և մաքսային մարմինների հետ հարաբերակցության ընթացքում փաստաբանի, որպես կարևոր գործընկերոջ դերին: Նա նշել է, որ փաստաբանությանն առնչվող օրենսդրությունը հնարավորություն է տալիս փաստաբանին կանգնել և մինչև վերջ մնալ գործարարի կողքին՝ կարևորելով փաստաբանական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված օրենսդրական կարգավորումները և գործուն մեխանիզմները, այդ թվում փաստաբանի, նրա գրասենյակի, բնակարանի խուզարկության արգելքը և այլն: Խոսելով կարևոր մեխանիզմներից՝ Արա Զոհրաբյանը հիշեցրել է, որ նախորդ տարի ՀՀ փաստաբանների պալատը հուշագիր է ստորագրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ: Նա տեղեկացրել է համատեղ հանձնախմբի մասին, որը կոչված է փաստաբանների իրավունքները պաշտպանել փաստաբան-վստահորդ-ՊԵԿ-ի աշխատակից հարաբերություններում, ինչը նույնպես կարևոր գործիք կարող է լինել գործարարների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Ֆրանսիայի փաստաբանական համայնքների ազգային խորհրդի անդամ Ալեն Մարտերը խոսել է նախորդ դարի 70-ականներից Ֆրանսիայում գործող ֆինանսական ներդրումների «Կառպա» համակարգի մասին, որը ստեղծվել և ղեկավարվում է փաստաբանների կողմից : Համակարգը շուրջ 10 տարի առաջ ներդրվել է նաև Հայաստանում: Նա նշել է, որ «Կառպան» բավական հաջողված գործիք է փաստաբանների համար. յուրաքանչյուր անգամ, երբ փաստաբանը պետք է որոշակի գումարի հոսքերի առնչվի, պետք է դա անի «Կառպա» կառույցի գումարային հաշիվներով: Նրա խոսքով՝ համակարգը երաշխավորում է փաստաբանի և նրա վստահորդի պաշտպանվածությունը: «Կառպա» համակարգը փաստաբանների փոխարեն որոշակի պարտավորություններ է ստանձնում պետական մարմինների հետ հարաբերությունների դեպքում, և արդյունքում՝ գումարային հոսքեր են ապահովվում փաստաբանական համայնքի համար: Համակարգը ստուգում է գումարների աղբյուրներն ունի հակակոռուպցիոն և փողերի լվացման դեմ պայքարի կանխարգելիչ գործիքներ:

Փարիզի փաստաբանների պալատի անդամ Սևակ Թորոսյանի խոսքով՝ քրեականության գործընթաց կա աշխարհում հետևյալ ուղղություններով՝ փողերի լվացում, կոռուպցիա, հարկերից խուսափում:

«Հայաստանի համար ամենագլխավոր խնդիրը Հայաստանից փողերի դուրսբերումն է: Այսօր աշխարհում համաշխարհային բիզնեսի 9 տոկոսի չափով կոռուպցիա կա: Կոռուպցիան լուրջ խնդիր է Հայաստանի համար, և այս երեք հանցագործությունների մեջ ամենակարևորն է: Փողերի լվացումը ևս խնդիր է»: Նա անդրադարձել է նաև ներդրումների գրավչության իրավական բևեռներին՝ ներկայացնելով փոքր և մեծ շուկաներ ունեցող երկրների առավելություններն ու ռիսկերը:

«Մենեջմենթ Միքս» ընկերության գլխավոր տնօրեն Ռաֆֆի Սեմերջյանը նշել է, որ Եվրոպայի հետ համեմատած՝ Հայաստանի հարկային դաշտը բավական գրավիչ է: Նա նշել է, որ իրավական դաշտում բարելավումներ են անհրաժեշտ, դատարանները պետք է սկսեն ավելի պրոֆեսիոնալ աշխատել: Նա համոզմունք է հայտնել, որ առավել գրավիչ պայմաններում միջազգային ներդրողներն իրենց ինքնավստահ կզգան, ավելի լավ կաշխատեն: Նա անդրադարձել է նաև գործող օրենքների կատարելագործման անհրաժեշտությանը:

«Կոնցեռն դիալոգ» ընկերության ավագ գործընկեր, փաստաբան Արամ Օրբելյանն անդրադարձել է Հայստանում ներդրումների օրենսդրության դատական և արտադատական կարգավորումներին: Նա ներկայացրել է ոլորտի խնդիրները, շուկայի առանձնահատկությունները և զարգացման ներկա միտումները: Նա նշել է, որ անկախացումից ի վեր Հայաստանում ստորագրվել է ներդրումային 42 պայմանագիր, ինչը վատ ցուցիչ չէ:

Քննարկմանը ելույթ են ունեցել նաև «ԷյԴիԱր Փարթներս» ՍՊԸ արբիտր Աիդա Ավանեսյանը, Հայաստանում Եվրոպական բիզնես ասոցիացիայի գործադիր տնօրեն Դիանա Սարումովան, ներկայացուցիչներ Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնից և ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչությունից: Վերջում բանախոսները պատասխանել են միջոցառման մասնակիցների հարցերին:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })